

ՀՀ ԳԱԱ Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԳՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ԺԷ
2016

ԵՐԵՎԱՆ



2017

ՀՏԴ 821.19.0
ԳՄԴ 83.3 (5Հ)
Գ 870

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Հանդեսի գլխավոր խմբագիր՝
բ.գ.թ. Սուրեն Աբրահամյան

Խմբագրական խորհրդի անդամներ՝

ակադ. Արամ Գրիգորյան
ակադ. Սերգեյ Սարինյան
բ.գ.դ. Աելիտա Դոլուխանյան
բ.գ.դ. Վարդան Դևրիկյան
բ.գ.դ. Ավիկ Իսահակյան
Էդվարդ Միլիտոնյան
բ.գ.դ. Վազգեն Գաբրիելյան
բ.գ.դ. Հենրիկ Էդոյան

Գրականագիտական հանդես. - Եր.: Արմավ,
Գ 870 2017. - 360 էջ:

ՀՏԴ 821.19.0
ԳՄԴ 83.3 (5Հ)

ISBN 978-9939-863-61-0

© ԳԱԱ Գրականության ինստիտուտ, 2017
© «Արմավ» հրատարակչություն, 2017

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՀԵՐԻՔՆԱԶ ՈՐՍԿԱՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Արեղյանի անվան
գրականության ինստիտուտ

ԱՔՐԱՀԱՄ ԱՆԿՅՈՒՐԱՅՈՒ ՈՂԲԻ ԺԱՆՐԱՅԻՆ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գրական ողբը, որ իր արմատներով կապվում է ժողովրդական լայնաց երգերի հետ, դարերի ծանապարհ է անցել՝ այդ ընթացքում ձեռք բերելով ժանրային ինքնատիպ գծեր:

Չնայած հեղինակների անհատական հայացքներին, գեղագիտական ըմբռնումներին՝ ողբի ընդհանուր դիմագիծը չի խաթարվել:

14-17-րդ դարերի պատմաողբերը հանգամանորեն ուսումնասիրած Պ. Խաչատրյանը, անդրադառնալով ողբերի ժանրային առանձնահատկություններին, այն է՝ էպիկական կամ քնարական նկարագրին, սյուժեին, կյանքի կոչվելու հանգամանքներին, նրանցում հերոսների առկայությանը կամ բացակայությանը, հեղինակների առանձնահատկության դրսևորումներին, առանձնացրել է պատմաողբի 4 ենթատեսակ՝ **ողբ-հիշատակարաններ, ողբ-քրոնիկներ, էպիկական (պատմողական) ողբեր, պատմողական տարրով երանգավորված քնարական ողբեր**: Անկյուրացու Ողբը նա դասում է ողբ-քրոնիկների շարքին, որոնց հատուկ է իրականության հարազատ պատկերումը առանց գեղարվեստական բավարար վերլուծության, գրեթե առանց ընդհանրացումների¹:

Գր. Խլաթեցու, Անկյուրացու և «Ողբ մայրաքաղաքին Կաֆայու» երկի հեղինակ Ներսեսի մասին Պ. Խաչատրյանը գրում է, որ նրանք առավելապես պատմողներ են, որոնք հետամուտ են եղել դեպքերն իրենց ժամանակագրական հաջորդականության մեջ ներկայացնելուն: Ըստ գրականագետի՝ «թեև իրենց գրվածները ողբ են կոչել (Խլաթեցին՝ երկի ավարտամասում), սակայն իրապես միևնույն ստեղծագործության սահմաններում նրանք համատեղել են ժամանակագրությունը և ողբը՝ գերակշռությունը տալով առաջինին»²:

1 Տե՛ս Խաչատրյան Պ.Մ., Հայ միջնադարյան պատմական ողբեր (ԺԴ-ԺԷ դդ.), Երևան, 1969, էջ 196-197:

2 Նույն տեղում, էջ 89:

«Հայկական ձեռագրերի հիշատակարաններ» աշխատության մեջ Հ. Բախչինյանը հիշատակարանների տարատեսակներից մեկն է համարում պատմական ողբ-հիշատակարանները, որոնք, ինչպես փաստում է գիտնականը, «նույն ժամանակագրական հիշատակարաններն են՝ ինչ-որ չափով թևակոխած ողբի ժանրային սահմանները»³: Աշխատության մեջ նա արձանագրում է, որ «XV-XVII դարերում չափածո ողբ-հիշատակարանների ձևով ու նմանությամբ գրվել են բազմաթիվ պատմական ողբեր, որոնցից հիշարժան են Աբրահամ Անկյուրացու, Ներսես Մոկացու, Հակոբ Բաթուկենցի, Ազարիա Սասնեցու, Ստեփանոս Թոխաթցու և այլոց ողբերը»⁴:

Վերոբերյալ տեսակետներում շեշտվում են Անկյուրացու Ողբի գեղարվեստա-ռձական այնպիսի հատկանիշները, որոնք քերթվածը մոտեցնում են ժամանակագրությանը կամ ժամանակագրական հիշատակարաններին:

Քննենք Անկյուրացու ստեղծագործության՝ իբրև ողբի, ժանրային յուրահատկությունները՝ հասկանալու համար՝ որքանով է հեղինակը հեռացել ժանրի էական հատկանիշներից:

Անկյուրացու Ողբը վերնագրված է այսպես. «Աբրահամու Անկյուրացույ ողբ ի վերայ առման Կոստանդինուպոլսոյ»⁵: Վերնագրում «ողբ» բառը ընթերցողին տեղեկություն է տալիս ստեղծագործության բովանդակության և ժանրի մասին: Պ. Խաչատրյանը գրում է. ««Վարքը», «ներբողը», «գովեստը» և այլն որևէ երկի խորագրում մատնանշում են միաժամանակ և՛ բովանդակություն, և՛ ժանր: Այդպիսին են նաև «ողբ», «ողբք», «ողբանք», «բան ողբոց», «ողբերգութիւն» կամ «բան ողբերգական» անվանումները»⁶:

Որոշ ձեռագրերում Անկյուրացու քերթվածի վերնագրում «ողբ» բառին փոխարինել են «տաղ», «ոտանաւոր», «բանք», «պատմութիւն» եզրույթները⁷: Երևույթը, անշուշտ, միջնադարին բնորոշ է. գրական ամենատարբեր հատկություններով օժտված երկերը՝ վարք, վկայաբանություն, ողբ, հիշատակարան, խրատ և այլն, հաճախ են

3 Բախչինյան Հ. Գ., Հայկական ձեռագրերի հիշատակարանները, Երևան, 1980, էջ 36:

4 Նույն տեղում:

5 Տե՛ս Անասյան Հ. Ս., Հայկական աղբյուրները Բյուզանդիայի անկման մասին, Երևան, 1957, էջ 35:

6 Խաչատրյան Պ. Մ., նշվ. աշխ., էջ 20:

7 Տե՛ս Անասյան Հ. Ս., նշվ. աշխ., էջ 29-34:

կոչվել տարբեր անուններով: Անկյուրացու պարագային էական է այն, որ եթե «տաղ», «ոտանաւոր» եզրերը մատնանշում են խոսքի կառուցման եղանակը, այսինքն՝ չափածո ստեղծագործություն լինելը, ապա «բանքը», «պատմութիւնը» երկը մոտեցնում են պատումին, զրույցին:

Որ Անկյուրացին երկը հղացել է իբրև ողբ, այդ մասին նա վկայում է քանիցս. «Այլ մեք գոչեմք յոյժ ողբալով», «Բազում ցաւօք զողբս յօրինեալ», «զողբս ընթերցեալ»:

Գաղափարական-քաղաքական բովանդակության առումով Անկյուրացու Ողբը, ինչպես մեր պատմաողբերը, իր մեջ ամփոփում է հայ ժողովրդի ազատագրության երազանքը, հույսի երգը:

Արձագանքելով Կոստանդնուպոլսի անկման պատմությանը՝ Անկյուրացին երկյուղում է, որ իր ժողովուրդը կարող է նմանատիպ ձակատագրի արժանանալ: Ողբի հյուսվածքում առարկայանում է ասելիքի նպատակաուղղվածությունը.

*Եղբայրք, և զայս պարտիմք քրննել.
Թէ այս նոցա է՞ր պատահեալ. (337-338)⁸*

Դժբախտությունների պատճառները որոնելիս Անկյուրացին, քրիստոնեական աշխարհայեցության համաձայն, մատնանշում է մեղքը՝ մեկ առ մեկ թվարկելով հասարակության տարբեր խավերի՝ իշխանավորների, հոգևոր առաջնորդների, առհասարակ ողջ ժողովրդի բարոյական անկումը, անառակ գործերի մեջ ընկղմվելը: Հատկապես ցավ է նրա համար հավատի նվազումը մարդկանց մեջ, ժամ ու աղոթքին մաքրությամբ չմոտենալը.

*Ձի սուրբք եղեն յոյժ նրւագեալ
Ճըշմարտութիւնքն նրւաղեալ:
Եւ առաջնորդք նոցա մոլեալ,
Ի սըրբութեանցն հեռացեալ,
Ժամ և աղօթք զոր արարեալ
Չայն մաքրութեամբ ոչ կատարեալ: (339-344)*

Հիշենք, դեռ Շնորհալիին էր «Ողբ Եղեսիոյ» քերթվածում բողոքում հոգևորականների վարքից.

*Քահանայք՝ քարոզք բանին
և սպասաւորք սուրբ խորհրդին,*

8 Մեջբերումները կատարում ենք Անասյանի Հ. Ս. «Հայկական աղբյուրները Բյուզանդիայի անկման մասին» գրքի նշված հրատարակությունից՝ տողերի համարակալումների նշումով:

*Անխրատաբար վարուք էին,
գոր չէ ասել պարտ՝ գործէին,
Ապա ի սուրբն սրբութեանց
անմաքրապէս մերձենային⁹:*

Ծնորհալին՝ իբրև առաջնորդ, պատվիրում էր աղոթքի խոսքերը, սաղմոսերգությունը, սուրբ գրքերի ընթերցվածքները, պաշտոներգությունը, սուրբ պատարագի քահանայական աղոթքները և կարգավորած կանոնների երգերը չանցկացնել անմիտ ձևով, այլ արտասուքով և մեծ երկյուղով¹⁰:

Համոզված լինելով, որ Կոստանդնուպոլիսը չէր կործանվի, եթե ժողովուրդը թաղված չլիներ մեղքի մեջ՝ Անկյուրացին իր ժողովրդին կոչ է անում բարի գործերով ապրել, հույսով ու հավատով գնալ եկեղեցի, հանցանքները խոստովանել, արտասվելով ապաշխարել, «որ չըլինիմք նոցա նմանեալ»:

Անկյուրացին Ողբը գրել է 1453թ.՝ Կոստանդնուպոլսի անկումից մի քանի ամիս անց, որովհետև նա թվարկում է այն գործերը, որ սուլթանի հրամանով կատարվել են քաղաքը գրավելուց հետո. քաղաքին իշխան է կարգվել, դատավոր, ապա հրաման է տրվել ուրիշ վայրերից նույնիսկ քրիստոնյաներ բռնի բերել՝ քաղաքում բնակեցնելու համար: Եւ հիշատակում է հոկտեմբերի 28-ին Անկյուրիայից բերված չորս հատերին:

Հայտնի է, որ Կոստանդնուպոլսի անկումից չորս ամիս անց նորից վերարծարծվել է խաչակրաց նոր արշավանք սկսելու գաղափարը: Հավանաբար սա ևս ազդակ է դառնում Անկյուրացու համար՝ հյուսելու Ողբը, որպեսզի հնարավորություն ունենա ցույց տալու լատինների վարած քաղաքականության հետևանքները և ընկալելի դարձնի քրիստոնյա ազգերի համար համերաշխության կարևորությունը:

Ինչ վերաբերում է Ողբի ձևակառուցվածքային հատկանիշներին, Անկյուրացին, կարծում ենք, քաջատեղյակ է եղել ողբի ժանրային կառուցվածքի հարցերին, սակայն նախընտրել է սյուժեի զարգացման փոքր-ինչ այլ հորինվածք՝ պահպանելով ժանրակազմիչ տարրերը:

18-րդ դարում «Ճարտասանութիւն» ձեռնարկում Ստեփանոս

⁹ Լերսէս Ծնորհալի, Ողբ եղեսիոյ, Քննական բնագիր, բանասիրական դիտողություններ, ծանոթագրություններ Մանիկ Մկրտչյանի, Երևան, 1973, էջ 101-102:

¹⁰ Տե՛ս. Լերսէս Ծնորհալի, Թուղթ ընդհանրական, աշխատասիրությամբ Է. Մ. Բաղդասարյանի, Երևան, 1995, էջ 119:

Ազոնցը առանձնացնում է կառուցվածքային տեսակետից ողբին հատկանշական երեք մաս՝ քնարականությամբ հագեցած մուտքը, բուն իրադարձությունը պատմող հիմնական մասը և հիշատակարանային բնույթ կրող վերջին հատվածը, ուր արտահայտվում է նաև գրողի լավատեսությունը: Ազոնցն իր համար ուղենիշ էր դարձրել Շնորհալու «Ողբ Եդեսիոյ» քերթվածը. «Այսմ իսկական և ճշգրիտ օրինակ ունիմք մեզ առաջի զողբն Եդեսեայ, գյօրինեալն ի Շնորհալոյն. յորում ամենայն վերոգրեալ հանգամանքդ լուսափայլ երևին»¹¹:

Վերոնշյալ մասերի հաջորդականության պահպանումը անխախտ չափանիշ չի դարձել:

Շնորհալու քերթվածը զարգանում է Երեմիայի ողբի հիմնական մոտիվներով: Շնորհալին Ողբն սկսում է մուտքով, որը յուրօրինակ նախերգանք է՝ հոգեբանորեն նախապատրաստելու ընթերցողին.

*Ողբացէ՛ք, եկեղեցիք,
հարսունք վերին առագաստի...
... Առ որս խօսիմ աղերսալի,
դուք լսեցէք լալոյս ձայնի՞¹²:*

Անկյուրացու Ողբն սկսվում է ոչ թե մուտքով, այլ բուն պատմությամբ: Շարադրանքը տրված է միահար, բայց իմաստային առումով կարելի է բաժանել չորս հատվածի. ա) սուլթան Մեհմեդի նախապատրաստական գործողությունների նկարագրություն, բ) Կոստանդին թագավորի և լատինների անհաջող բանակցությունների և քաղաքն առանց օգնության թողնելու մասին, գ) քաղաքի վրա սուլթանի հարձակման նկարագրություն, դ) անօրինակ կոտորածների, քաղաքի գրավման և հետագա տնօրինությունների պատկերում:

Ողբի սկսվածքը, իրոք, ժամանակագրական հիշատակարանի տպավորություն է թողնում.

*Յինըն հարիւր ւերկու թրւին,
Դառն և ի վատ ժամանակին,
Տէր բարկացաւ յոյժ վերըստին
Ազգին Հռոմոց յունականին: (1-4)*

Պատումին բնորոշ է ժամանակագրություններին հատկանշական որոշակիացման միտումը՝ նշել անուններ, տարեթիվ, ամիս, օր, նույնիսկ հիշատակել տոները: Կա դեպքերի հանգամանալի նկարագրու-

11 Ազոնց Ատ., Ճարտասանութիւն, Վենետիկ, 1775, էջ 431:

12 Ներսէս Շնորհալի, Ողբ Եդեսիոյ, էջ 21-22:

թյուն, իրադարձությունների ժամանակային հերթագայում, գրողի վերաբերմունք, առանց, սակայն, բանաստեղծական պատկերավորության: Բացակայում է, կարծես, չարիքը ոչ թե պարզ պատմությամբ, այլ ունկնդրի ողբն ու կարեկցանքը շարժելու համար պես-պես ձևով ընդլայնելու ձգտումը, ինչի մասին գրում էր Ստ. Ազոնցը¹³:

Հեղինակի վերաբերմունքը տեղի ունեցածի հանդեպ արտահայտվում է կարճ բնորոշումներով և գնահատականներով. ժամանակը դառն է և վատ, իսկ սուլթանի նախապատրաստական գործողությունները, մասնավորապես՝ «Բողազ Լեքսանդրի» բերդի կառուցումը՝ «ծանրագին»՝ իր հեռահար նպատակներով.

Նախ փոքրագոյն բան խորհեցաւ,

Որ կատարածն էր ծանրագին: (9-10)

Ընթերցողի վրա հուզական ներգործություն թողնելու փոխարեն Անկյուրացին, քաջատեղյակ լինելով Կոստանդնուպոլսի հասարակության տարբեր խավերի դիրքորոշումներին, փորձում է թափանցել երևույթների խորքը և հասկանալ երկպառակությունների, օրհասական պահին թշնամու դեմ չմիաբանվելու պատճառները, առհասարակ քաղաքի կործանման պատճառները, որոնց քննությամբ հետագա դարերում զբաղվել են բազում գիտնականներ: Անկյուրացին չի վարանում քննադատելու քրիստոնյա լատիններին, որոնք, օգտվելով Կոստանդինի անօգնական վիճակից, դավանաբանական խնդիրները մեջտեղ բերեցին, և դրա հետևանքով քաղաքի բնակչությունը բաժանվեց երկու մասի.

Իսկ ազգն անգութ լատինական

Բանս անյարմար ի մէջ բերին՝

«Աւանդութեամբ ի մեզ դարձիր,

Չքաղաքդ արա ի մեզ յանձին»:

Իսկ թագաւորըն Կոստանդին

Հաւան եղեալ բանից նոցին՝

Քաղաքն յերկուս բաժանեցաւ,

Կէսքն ի Հոռոմ, կէսքն ի լատին: (37-44)

Խոսքն, ըստ էության, Կոստանդնուպոլսի անկման նախօրեին ազգային-ուղղափառական և լատինասիրական հոսանքների մասին է: Ինչ վերաբերում է Հ. Անասյանի նշած երրորդ՝ «թուրքասիական պարտիային»¹⁴, ապա վերջինիս կողմնակիցների թիվը քիչ էր:

¹³ Տե՛ս Ազոնց Ստ., Ճարտասանութիւն, էջ 430:

¹⁴ Անասյան Հ. Ս., Հայկական աղբյուրները, էջ 13:

Անկյուրացին հեզնանքով է խոսում իբր օգնության շտապող, բայց ծովի վրա անհաջողակ երեքացող նավերի մասին¹⁵:

Հաջորդ հատվածում նկարագրվում են սուլթանի գործողությունները՝ ահռելի թնդանոթի հարվածներից հինգ աշտարակների փլուզումը, քաղաքը բոլոր կողմերից շրջապատելը, բանակին քաջալերելը՝ չտեսնված ավարի ու գերիների խոստումով: Երեքշաբթի օրը՝ Գալիանյայց տոնին, սկսվում են մարտական գործողությունները: Թշնամին մուտք է գործում քաղաք: Կռվողները չեն կարողանում միաբանվել:

Ոմանք էին հետ թագուրին,

Կէսքն ասէին՝ կուտամք թուրքին: (95-96)

Ըստ էության, այս տողերը նկատի ունենալով է Աշոտ Հովհաննիսյանը պարզաբանում, որ «Պոլսի անկումը Անկյուրացին կապում էր այն իրողության հետ, որ երկյուղ կրելով հույն ժողովրդից, բյուզանդական կառավարությունը քաղաքի գլխավոր մարտկոցների պաշտպանությունը հանձնել էր վարձկան ֆրանկների (իտալացիների, սպանիացիների, ֆրանսիացիների և գերմանացիների) ձեռքը»¹⁶:

Դեպքերի վիպական այս շղթայում գերիշխում է փաստագրական պատմողականությունը, չկան քնարական ընդմիջարկումներ, պատկերագծվում են դեպքերը, և Ողբը դառնում է իրադարձությունների արտացոլանքը՝ հեղինակային գնահատականներով, տեղի ունեցածի պատճառների բացահայտումով: Հատվածը հյուսված է ին հանգով, որը, ինչպես նաև յամբական երկանդամ 8-վանկանի տողերը, նպաստում են գործողությունների արագ թափի ընկալմանը:

Գրողի հուզական վերաբերմունքը դրսևորվում է կոտորածների, անլսելի վայրագությունների նկարագրություններում: Կատարվածի հոգեբանական վերապրումը հուզական լիցք է հաղորդում խոսքին: Բայերի վերջավորությունները խլէին, հարկանէին, խողխողէին, ողբահեծ հառաչանքների, զգայացունց ձիչերի արձագանքներն են հասցնում ընթերցողին:

Մարդկանց աղաղակն ու ողբը, լացն ու կականը, գրում է Անկյուրացին, «Ոչ ոք կարէ լեզուով ասել // Եւ ոչ բանիւ մարդկան պատմին» (143-144):

15 Նույն տեղում, էջ 38:

16 Հովհաննիսյան Աշոտ, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, Գիրք առաջին, Երևան, 1957, էջ 90:

Անշուշտ, Անկյուրացին չունի Ծնորհալու բանաստեղծական ուժը, նորագյուտ հնարքները, և վերջինիս «դասընտիր» գրվածքը, ինչպես բնորոշում է Ղ. Ալիշանը¹⁷, գեղարվեստականության առումով անհամեմատելի է Անկյուրացու Ողբի հետ, սակայն կոտորածների ահազարհուր տեսարանները ակամա որոշ զուգահեռներ են ծնում: Ծնորհալու Ողբում ցավը խելացնորության է հասցրել Եդեսիային, նա մորմոքում է՝ նկարագրելով թշնամու անմարդկային արարքները.

*Քանզի զոմանս գերէին,
որք գեղեցիկ դիմօքն էին
Առ յուստերաց և դստերաց,
ընդ որս ինքեանքն հաճեին:
Իսկ զլցեալսն հասակաւ
զայն չարաչար խողխողէին.
Եւ զխեղդելոց դիակուտին
մարմինս արտաքս քարշէին,
Չորս զննէին, կողոպտէին,
մերկ, խայտառակ զայն թողուին¹⁸:*

Անկյուրացին գրում է.

*Չպատերազմողսըն զոր գըտին,
Չամենեսան կոտորեցին.
Այլ և ըզայրս և ըզկանայս
Ի գերութիւն իսկ վարեցին:
Եւ զնորահաս տըղայս նոցին
Ի մօր գըրկացըն խլէին,
Առեալ զքարի հարկանէին,
Չծերսըն սըրով խողխողէին: (133-140)*

Այս ազդեցիկ պատկերներին հաջորդում են եկեղեցիների կողոպուտի, մարտիրոսների սուրբ նշխարների ապականման, թագավորների գերեզմանները բացելու, կրոնավորների՝ գերի չընկնելու համար կամովին մահն ընդունելու տեսարանների նկարագրությունները, որոնցում աստիճանաբար կերպավորվում է անգութ, անողորմ, մարդկային որևէ հատկանիշներից զուրկ թշնամին, և ծնվում է ատելությունը նրա հանդեպ: Չկա մարդկային հոգեբանություն: Մի քանի մակդիրներ միայն՝ «չար սուլթան», «չար թշնամիք», «սուլթան մի ահա-

17 Տե՛ս Ղ. Ալիշան, Ծնորհալի և պարագայ իւր, Վենետիկ, 1873, էջ 199:

18 «Ողբ Եդեսիոյ», էջ 77-78:

գին», որոնք կրկնվում են և խորք չունեն, երբեմն նաև համեմատություններ, ինչպես՝

Իբր զգազան մրորնչէին,

Որ ծարաւի արեան լինին: (131-132)

Թշնամին կերպավորվում է արարքներով: Օրինակ՝ սուլթանի նենգությունը դրսևորվում է բյուզանդական նավատորմի հրամանատար Լուկաս Նոտարասի հետ վարվելու դրվագում. սիրով մեծարում է նրան, գաղտնիքներ կորզում նրանից, ապա հրամայում երկու որդիների հետ գլխատել:

Ողբի հաջորդ հատվածը գրված է քնարական ոճով: Խոսքի հուզական երանգավորմանը նպաստում է **խալ** հանգը: Ցավն ավելի ու ավելի չերկարացնելու համար Անկյուրացին ավարտում է ողբերգական իրադարձությունների նկարագրությունը՝ իր հառաչն ու կսկիծը խառնելով մեծ քաղաքի կործանման համար ծնված ափսոսանքին: Բանաստեղծը՝ իբրև ձայնարկու, ողբակցելու է կանչում մարդկանց: Այն տպավորությունն է, թե հոգեբանական լիցքեր պարունակող մուտքը տեղափոխվել է հիմնական մասից հետո: Հետաքրքրական է, որ Անկյուրացին դիմում է ոչ թե բուլոբին, այլ հավատացյալ եղբայրներին ու հայերին.

Եկայք, եղբայրք հաւատացեալք,

Հայրք և ընտրեալք իմ սիրեցեալք,

Յարմարեսցուք ողբս արտասուաց

Բանիս որ այժմ են պատահեալ: (281-284)

Ենթադրում ենք, որ հենց նրանց՝ հոգևորական եղբայրների խնդրանքով կամ առաջարկով է Անկյուրացին հորինել իր Ողբը: Այս հանգամանքը, կամ էլ, իբրև լսարան՝ նախ և առաջ նրանց նկատի ունենալը («Եղբայրք, և զայս պարտիմք քըննել») գուցե էական դեր է խաղացել Ողբի հորինվածքի վրա՝ հյուսվածքն ավելի շատ օժտելով սթափ դատողականությամբ, քան հույզերին տրվելու կամ սեփական ներաշխարհը բացահայտելու ցանկությամբ: Չնայած դրան՝ որոշակիանում է հեղինակի կերպարը՝ քրիստոնյա քաղաքի հանդեպ մեծ կարեկցանքով, մարդկային տառապանքի առաջ կարկամելու խոստովանանքով, առանց մեղքի ապրելու ներքին բարոյականությամբ,

19 Առաքել Սինեցի, Յաղագս քերականութեան համառօտ լուծմունք, (աշխատասիրութեամբ՝ Լ. Գ. Խաչերեանի), Լոս Անձելոս, 1982, էջ 87: Սյունեցու այս ձևակերպումը գրեթե նույնությամբ առկա է Ստեփանոս Սյունեցու, Հովհաննես Պլուզ երգնկացու, Հովհաննես Ծործորեցու, Եսայի Լչեցու մոտ:

մեծ հավատով, Մեծ դատաստանի ժամանակ իր ազգի՝ Տիրոջ օրինանքին արժանանալու փափագով, իսկ այս կյանքում՝ «աստէն», առանց պատուհասների պարելու իղձով.

Աստէն անփորձ ըզմեզ պահեալ,

Չար բանսարկուէն զմեզ ազատեալ,

Յանօրինաց չարեաց փըրկեալ

Եւ ի նեղչաց ըմեզ զերծուցեալ: (369-372)

Անկյուրացու Ողբն ավարտվում է հիշատակարանային բնույթ կրող կարճ վերջվածքով, ուր հեղինակը որոշ տեղեկություններ է տալիս իր մասին, նշում, որ երեք ամիս եղել է Կոստանդնուպոլսում, տեսել քաղաքը «ի բարութեան ժամն», ուխտի է գնացել սրբություններին և Քրիստոսի պատմուձանը բազում անգամ իր աչքով տեսել:

Մեր կարծիքով՝ այս հատվածը երկու նպատակ է հետապնդում. նախ՝ Անկյուրացին ցանկանում է մեկ անգամ ևս հիշեցնել քրիստոնեական կարևորագույն կենտրոնի նախկին դերն ու հեղինակությունը, ապա վստահություն արթնացնել ընթերցողի մեջ իր գրածների հանդեպ և մեղադրանքի փոխարեն ներման արժանանալ հնարավոր սխալների դեպքում:

Անկյուրացու Ողբի ուժը նրա խոսքի անկեղծությունն է: Չկան ճոխ, փոխաբերական, ենթատեքստեր ունեցող պատկերներ, մակդիրները ինքնատիպ չեն: Հեղինակը խոսքին երբեմն նոր երանգավորում է հաղորդում բարաոնության կիրառումով: «Այժմ է՛ր եղեր դու աւերեալ» հարցադրման միջոցով նա շնչավորում է քաղաքը, պատկերագծում քաղաքի պատմությունը իր հզոր՝ Կոստանդին, Թեոդոս, Հուստիանոս արքաներով, նրանց կատարած արժանավայել գործերով: Եվ ապա քաղաքի այս փառահեղ ընթացքին հակադրում է այլահավատների ձեռքով քաղաքի և սուրբ տաճարի ավերումը, մշակութային արժեքների ոչնչացումը:

Խոսքն ավելի պատկերավոր դարձնելու համար նա դիմում է սաղմոսներին, բանաստեղծորեն վերարտադրում պատկերներ, որոնք իմաստային առումով համընկնում են իր ասելիքին, նաև մեծացնում են հուզական տպավորությունը:

Այսպիսով՝ ժանրային առումով Անկյուրացու Ողբը համադրում է ժամանակագրությանը, հիշատակարաններին բնորոշ գծեր: Ստեղծվել է տարբեր ժանրերի յուրահատուկ համակցություն: Դա հավանաբար բխել է Ողբի հասարակական և գեղագիտական նպատակադրու-

մից՝ քննել ու հասկանալ հզորագույն քաղաքի կործանման պատճառները՝ դառնաբեր ժամանակներում վառ պահելով իր ազգի փրկության հույսը:

Ողբին բնորոշ կառուցվածքային հիմնական մասերը երկում պահպանված են, սակայն այլ լուծումներով: Ողբակցության կոչը, քաղաքի անցյալ փառավոր դիրքի, հեղինակության և ցավագին ներկայի հակադրությունը, որ մեծացնում է կորստի զգացումը, հաջորդում են աղետալի դեպքերի նկարագրությանը: Այս մասում քնարական տարրը գերիշխում է՝ նպաստելով գեղարվեստականությանը:

Ողբում թշնամին մարմնավորվում է իր գործողություններով:

Պատկերավորման-արտահայտչական միջոցները սակավ են, սակայն երբեմն հյուսվում են ազդեցիկ պատկերներ:

Պահպանված է ողբի ժանրը հստակորեն ուրվագծող բանաձևը՝ «ընդ ողբն պարտ է եւ գյուտոյն նուագն խառնել»¹⁹:

Աբրահամ Անկյուրացու Ողբի իշխող գաղափարը հայրենասիրությունն է՝ առարկայացած իր ազգի ապագայի մտահոգությամբ, ներկա անորոշ վիճակի համար ապրած ցավով, այս կյանքում խաղաղ ապրելու երազանքով:

Բանալի բառեր - ողբ, ժամանակագրություն, հիշատակարան, գաղափարական բովանդակություն, ոճակառուցվածքային առանձնահատկություններ:

ЭРИКНАЗ ВОРСКАНЯН

Жанровые особенности плача Абраама Анкюраци

Резюме

Плач Абраама Анкюраци имеет более нарративную природу. В его работе представлены не только само завоевание Константинополя, но и описания предшествующих и последующих лет, вследствие чего работа приобрела не только литературную значимость, но также может оцениваться как исторический первоисточник.

Следуя литературной традиции, автор сохраняет основные жанровые характеристики плача как, например, скорбь смешанная с надеждой.

Преобладающая идея плача Абраама Анкюраци - патриотизм, который материализуется в беспокойство о будущем нации, в мечте о мирной жизни.

Характерные черты, присущие плачу, такие как вступление, описание событий, заключение, сохранены и у Абраама Анкюраци, однако эти черты имеют другое сцепление. Плач начинается прямо с самого события.

Одной из специфических черт плача Анкюраци является откровенность беседы.

HERIKNAZ VORSKANYAN
Genre peculiarities of Abraham Ankjuratsi's lamentation

Abstract

The Lamentation of Abraham Ankjuratsi has more narrative nature. Not only the invasion of Constantinople, but also the descriptions of succeeding and preceding years are faithfully illustrated in his work, with the help of which this work acquires not only a literary evaluation, but also the value of historical resources.

Following the literary tradition, the author preserves the important genre characteristics, i.e. the notion of lamentation infused with hope.

The prevailing idea of Ankjuratsi's Lamentation is patriotism, which is materialized in the worry about the future of the nation, about the dream of living a peaceful life.

The characteristic features, which are specific to the Lamentation, i.e. the preface, the description of events, the ending are preserved in Ankjuratsi's work, however these features have another cohesion. The Lamentation begins with the actual narration.

One of the peculiar features of Ankjuratsi's Lamentation is the frankness of the speech.

ՆԱՀԱՊԵՏ ՔՈՒՉԱԿԸ ԵՎ ՆՐԱ ԱՆՈՒՆՈՎ ՄԵՁ ՀԱՍԱԾ ԵՐԳԵՐԸ

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՔՈՒՉԱԿԻ ՄԱՍԻՆ: Հայագիտության մեջ աշուղ Քուչակին և (կամ) նրա ստեղծագործությանն անդրադարձել են Ղ. Ալիշանը¹, Ա. Տեկանցը², Կ. Կոստանյանցը³, Տ. Պալյանը⁴, Մ. Աբեղյանը⁵, Հովհ. Թադևոսյանը⁶, Ա. Չոպանյանը⁷, Հ. Աձեմյանը⁸, Տիրայր Արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը⁹, Աս. Մնացականյանը¹⁰, Օ. Եգանյանը¹¹, Ծ. Գրիգորյանը¹², Հ. Սահակյանը¹³, Պ. Խաչատրյանը¹⁴, Խ. Ամիր-

1. Տե՛ս Ալիշան Ղ., Հուշիկք հայրենյաց հայոց, Կ. Փ., Վենետիկ, 1870:

2. Տե՛ս Տեկանց Ա., Հայերգ, մեղեդիք, տաղք և երգք, Թիֆլիս, 1882:

3. Տե՛ս Կոստանյանց Կ., Միջնադարյան հայոց տաղեր ու ոտանավորներ, պրակ Ա և Բ, Թիֆլիս, 1892:

4. Տե՛ս Պալյան Տ., Անյիշատակ հայ աշուղ մը, Հանդես ամսօրյա, 1897, էջ 344-345:

5. Տե՛ս Աբեղյան Մ., Երկեր, Կ. Փ., Ե., 1967:

6. Տե՛ս Թադևոսյան Հովհ., Քուչակ Նահապետի երգերը, Թիֆլիս, 1903:

7. Տե՛ս Չոպանյան Ա., Նահապետ Քուչակի դիվանը, Փարիզ, 1902, նաև Հայրեններու բուրաստանը, Փարիզ, 1940:

8. Տե՛ս «Ծաղկաբաղ Վասպուրականի հայ ժողովրդական բանահյուսության» ժողովածուն, Էջմիածին, 1917, էջ 94-96:

9. Ֆրիկ, Դիվան աշխատասիրությամբ Տիրայր Արքեպիսկոպոսի, Նյու-Յորք, 1952, էջք 138, 551-558:

10. Տե՛ս Մնացականյան Աս., Հայրենների և Նահապետ Քուչակի մասին, Պատմա-բանասիրական հանդես, Ե., 1958, թիվ 2, էջ 234-257:

11. Տե՛ս Եգանյան Օ., Նահապետ Քուչակի հայատառ թուրքերեն տաղերը, Բանբեր Մատենադարանի, թիվ 5, 1960:

12. Տե՛ս Գրիգորյան Ծ., Հայ հին գուսանական երգեր, Ե., 1971, նաև Գրիգորյան Ծ., Ռվ Է, Ի վերջո, Նահապետ Քուչակը, Լրաբեր հասարակական գիտությունների, Ե., 1984, N 7:

13. Տե՛ս Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը, աշխ. Հ. Սահակյանի, Կ. Ա., Ե., 1986:

14. Տե՛ս Գանձարան հայ հին բանաստեղծության, աշխ. Պ. Խաչատրյանի, Ե., 2000:

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՈՐՍԿԱՆՅԱՆ Հ. Արրահամ Անկյուրացու ողբի ժանրային յուրահատկությունները	3
ВОРСКАНЯН Э. Жанровые особенности плача Абраама Анкюраци	3
VORSKANYAN H. Genre peculiarities of Abraham Ankjuratsi's lamentation	3

ԵԴԻԱԶԱՐՅԱՆ Վ. Նահապետ Քուչակը և նրա անունով մեզ հասած երգերը . . .	16
ЕГИАЗАРЯН В. Напет Кучак и дошедшие до нас его песни	16
YEGHIAZARYAN V. Nahapet Quchak and his literary songs	16

ՄԱՅԱԿԱՆՅԱՆ Ե. XIX դարի 90-ական թթ. քննադատությունը և Թումանյանը	44
МНАЦАКАНЯН Е. Туманян и критика 90-х гг. XIX века	44
MNATSAKANYAN E. Literary criticism and Toumanyan in the 90s of XIX century	44

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Ա. Կոստան Չարյանի «Անցորդը եւ իր ճամբան» վեպի ժանրը	55
ОГАНЕСЯН А. "Прохожий и его путь": жанр романа	55
HOVHANNISYAN A. The genre of the novel "The Traveler and His Road"	55

ՍԱՐԻԲԵԿՅԱՆ Հ. Խորհրդային շրջանի առաջին մոդեռնիստական վեպը	61
САРИБЕКЯН Г. Первый модернистский роман советского периода	61
SARIBEKYAN H. The First Modernist Novel of the Soviet Period	61

ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ Չ. XX դարավերջի հայ պոեզիան արդի համաշխարհային գրականության համատեքստում	71
АВЕТИСЯН З. Современная армянская поэзия в конце XX века в контексте мировой литературы	71
AVETISYAN Z. The Armenian Contemporary Poetry in the End of the XX Century in the Context of World Literature	71

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ Ս. Հենրիկ Էդոյան. «Խոսքն իմ հենարանն է» և «...Այդ անշարժ վայրկյանն եմ ես»	110
АБРААМЯН С. Генрих Эдоян: "слово - моя база" и "...я тот неподвижный момент"	110

ABRAAMIAN S. Henrik Edoyan: "word is my base"
and "...that immovable moment is me" 110

ԱՎԱՆԵՍՅԱՆ Ա. 20-րդ դարավերջի
հայ պատմավեպի առանձնահատկությունները 164
АВАНЕСЯН А. Особенности армянского исторического
романа конца 20-ого века 164
AVANESYAN A. The peculiarities of armenian historical
novels at the end of the 20th century 164

ՍԱՐԻՆՅԱՆ Ս. Հայտնության խորհուրդը
կամ բանաստեղծության փիլիսոփայությունը 176
САРИНЯН С. Идея откровения или философия поэма 176
SARINYAN S. The Conceit of Revelation or the Philosophy of the Poem 176

ԽԵՉԻԿՅԱՆ Հ. Անկախության շրջանի հայ արձակը 198
ХЕЧИКЯН А. Армянская проза периода независимости 198
KHECHIKYAN H. Armenian Prose of the Independence Period 198

ՈՍԿԱՆՅԱՆ Ռ. Ադամը՝ որպես միայնության և անմեղության
արքետիպ Լ. Խեչոյանի «Սև գիրք, ծանր բզեզ» վեպում 214
ВОСКАНЯН Р. Адам, как архетип одиночества и невинности
в романе Л. Хечояна "Черная книга, тяжелый жук" 214
VOSKANYAN R. Adam as Archetypal of Loneliness and
Innocence in L. Khechoyan,s Novel "Black Book, Heary Beetle" 214

ԳՐԱԿԱՆ ԿԱՊԵՐ

ԻՍԱՀԱԿՅԱՆ ԱՎ. Բանաստեղծության հրաշագործը 221
ИСААКЯН АВ. Маг поэзии 221
ISAHAKYAN AV. The wizard of poetry 221

ՎԱՀԵ ԱՐՄԵՆ «Արյան-գիտակցություն»-ը Դեյվիդ
Հրրբրդթ Լորենսի «Լեդի Չատերլիի սիրեկանը» վեպում 234
АРСЕНИЯН В. "Сознание крови" в романе Дейвида
Герберга Лоуренса "Любовник леди Чаттерлей" 234
ARSENYAN V. "Blood-consciousness" in the novel
"Lady Chatterley's Lover" by D.H. Lawrence" 234

ՊԵՏՐՈՍՅԱՆ Ռ. Արվեստի և գրականության խնդիրներն
ըստ Միգել դե Ունամունոյի 250
ПЕТРОСЯН Р. Проблемы искусства и литературы по Мигелю де Унамуну . . . 250

PETROSYAN R. The Problems of Arts and Literature According to Miguel de Unamuno	250
--	-----

ԱՊՐԵՍՈՎԱ Ս. «Խմբի տեսության» արտացոլումը Զ. Սթեյնբեքի «Ցասման ողկույզներ» վեպում	261
АПРЕСОВА С. Отражение "теории группы" в романе Дж. Стейнбека "Гроздь гнева"	261
APRESOVA S. The Reflection of "Group Theory" in J. Steinbacks novel "The Grapes of Wraft"	261

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ Մ. Լատինաամերիկյան էկզիստենցիալիզմի առանձնահատկությունները	270
КИРАКОСЯН М. Особенности латиноамериканского экзистенциализма	270
KIRAKOSYAN M. Peculiarities of latin american existentialism	270

ՍԻՄՅԱՆ Տ. Կոռուպցիայի մոտիվը՝ ըստ Լաո Մայի «Մի յուրահատուկ անձնավորություն» պատմվածաշարի	279
СИМЯН Т. Тема коррупции на примере цикла рассказов Лао Ма "Особенная личность"	279
SIMYAN T. The topic of corruption on the example of the story cycle of "One particular Person" by Lao Ma	279

ՄՇԱԿՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ

ՄՈՒՇԵԴՅԱՆ Ա. Էմանուիլ Կանտի գնահատականը հայ վաճառականների քաղաքակրթական դերի մասին և Գյոթեի ստեղծած հայի կերպարը	292
МУШЕГЯН А. Оценка Иммануила Канта о гражданской роли армянских торговцев и армянский характер по Гете	292
MUSHEGHYAN A. Immanuel Kant's Valuation about the Civil Role of Armenian Merchants and the Armenian Character by Geothe	292

ԲԵՅԼԵՐՅԱՆ Հ. «Քանքարների» և «Մնասների» առակների մեկնաբանությունը հայ միջնադարյան քարոզիտական գրականության մեջ	300
БЕЙЛЕРЯН О. Параллельные толкования новозаветные притчи "О талантах" и "О минах" в средневековой армянской богословской литературе	300
BEILERYAN H. Par allel Inter pretationson the New Testament Par ablesabout the Talentsand "Mines" in Medieval Ar menian Theological Liter ature	300

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Ս. Մանուկ Աբեղյանի և Թումանյանի գրական համագործակցության պատմությունից	312
ОВАНЕСЯН С. Из истории литературного сотрудничества Манука Абегаына и Ованеса Туманяна	312

HOVHANNISYAN S. From the history of literary collaboration
of Manuk Abeghyan and Hovhannes Tumanyan 312

ՄԿՐՏՈՒՅԱՆ Ա. Աստվածաշնչային երկու թեմաների
հետևողությամբ գրված բանաստեղծություններ 325
МКРТУМЯН А. Стихи, написанные по мотивам двух библейских тем 325
МКРТУМЯН А. On the poems written in accordance
with the two bible themes 325

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

ԵԴԻԱԶԱՀՅԱՆ Գ. Աներիկացի կանայք Ալիս Հովհաննիսյանի արձակում 336
ЕГИАЗАРЯН Г. Женщины в прозе Алис Оганисян 336
YEGHIAZARYAN G. The Women in Alice Hovhanisyan's Prose 336

ՀՈՒԲԵԼՅԱՆՆԵՐ

ՎԼԱԴԻՄԻՐ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ (Ծննդյան 80-ամյակի առթիվ) -
Որսկանյան Հերիքնազ 344
ԱԼԲԵՐՏ ՍՈՒՇԵԴՅԱՆ (Ծննդյան 85-ամյակի առթիվ) -
Որսկանյան Հերիքնազ 346
ՔՆԱՐԻԿ ՏԵՐ-ԴԱՎԹՅԱՆ – ԱՐԵՎՇԱՏՅԱՆ (Ծննդյան 90-ամյակի առթիվ) -
Որսկանյան Հերիքնազ 349

ЮБИЛЯРЫ

ВЛАДИМИР КИРАКОСЯН (80-летний юбилей) - Ворсканян Эрикназ 344
АЛБЕРТ МУШЕГЯН (85-летний юбилей) - Ворсканян Эрикназ 346
КНАРИК ТЕР-ДАВТЯН-АРЕВШАТЯН (90-летний юбилей) -
Ворсканян Эрикназ 349

JUBILEES On the occasion of

Vladimir Kirakosyan's 80th anniversary - Vorskanyan Heriqnaz 344
Albert Musheghyan's 85th anniversary - Vorskanyan Heriqnaz 346
Qnarik Ter- Davtyan - Arevshatyan's 90th anniversary - Vorskanyan Heriqnaz . . 349

ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ Սուրեն – ՀՀ ԳԱԱ Մանկ Արեղյանի անվան գրականության
ինստիտուտի Նորագույն շրջանի հայ գրականության բաժնի վարիչ

АБРАМЯН Сурен - Заведующий Отделом новейшей армянской литературы
Института литературы НАН РА имени Манука Абегиана

ABRAAMIAN Suren - RA, NAS, Institute of Literature after Manuk Abeghyan,
Head of the Modern Armenian Literature Department

Էլ. փոստ - surenabraham@mail.ru

ԱՊՐԵՍՈՎԱ Սոնյա – Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվա-
աարակագիտական համալսարանի գրականագիտության ամբիոնի դոցենտ

АПРЕСОВА Соңя - Доцент Кафедры литературоведения Ереванского
Государственного Лингвистического университета имени В. Брюсова

APRESOVA Sonya - Yerevan Brusov State University Languages and Social
Sciences, Chair of Literary Studies, Associate professor

Էլ. փոստ - sonys.apresova@gmail.com

ԱՎԱՆԵՍՅԱՆ Արմեն – ՀՀ ԳԱԱ Մ. Արեղյանի անվան գրականության ինս-
տիտուտի ավագ գիտաշխատող

АВАНЕСЯН Армен - старший научный сотрудник Института литературы
НАН РА имени Манука Абегиана

AVANESYAN Armen - RA, NAS, Institute of Literature after Manuk Abeghyan,
Senior researcher

Էլ. փոստ - avanesyanarmen@yandex.com

ԱՎԵՏԻՍՅԱՆ Չավեն - ՀՀ ԳԱԱ Մ. Արեղյանի անվան գրականության ինս-
տիտուտի առաջատար գիտաշխատող

АВETИСЯН Завен - ведущий научный сотрудник Института литературы
НАН РА имени Манука Абегиана

AVETISYAN Zaven - RA, NAS, Institute of Literature after Manuk Abeghyan,
Leading researcher

Էլ. փոստ - litinst@sci.am

ԲԵՅԼԵՐՅԱՆ Հովհաննես Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագ-
րերի ինստիտուտի (Մատենադարան) գիտաշխատող

БЕЙЛЕРЯН Ованес - научный сотрудник Ереванского Института древних
рукописей (Матенадаран) имени св. Месропа Маштоца

BEILERYAN Hovhannes - Scientific Research Institute of Ancient Manuscripts
named after Mesrop Mashots (Matenadaran), Researcher

Էլ. փոստ - hovbeyleryan@gmail.com

ԵՂԻԱԶԱՀՅԱՆ Գայանե – Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվա-
հասարակագիտական համալսարանի ոճաբանության և բառագիտության
ամբիոնի վարիչ

ЕГИАЗАРЯН Гаяне - Заведующая Кафедрой лексикологии и стилистики
Ереванского Государственного Лингвистического университета имени В. Брюсова
YEGHIAZARYAN Gayane - Yerevan Brusov State University Languages and
Social Sciences, Head of the Chair of Lexicology and Stylistics

Էլ. փոստ - gyeghizaryan@hotmail.com; hend_englishcom@ brusov.am

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ Վանո – Վանաձորի Հովի. Թումանյանի անվան պետական
համալսարանի գրականության ամբիոնի դոցենտ

ЕГИАЗАРЯН Ваню - Доцент Кафедры литературы Ванadzорского
Государского Университета имени О. Туманяна
YEGHIAZARYAN Vano - Vanadzor State University after Hovhannes
Toumanyan, Chair of Literature, Associate professor

Էլ. փոստ - vano.exiazaryan@mail.ru

ԻՍԱՀԱԿՅԱՆ Ավետիք – ՀՀ ԳԱԱ Մ. Արեղյանի անվան գրականության ինս-
տիտուտի տնօրենի խորհրդական

ИСААКЯН Аветик - Советник директора Института литературы НАН РА
имени Манука Абегамяна

ISAHAKYAN Avetik - RA, NAS, Institute of Literature after Manuk Abeghyan,
Advisor of director

ԽԵՉԻԿՅԱՆ Հասմիկ – Մայնցի Յոհանես Գուտենբերգ համալսարանի հե-
տազոտող

ХЕЧИКЯН Асмик - аналитик научной программы Университета им.
Иоганнеса Гутенберга в Майнце

КНЕЧИКЯН Hasmik - Johannes Gutenberg University of Mainz, postdoctoral
student

Էլ. փոստ - hkhechikyan@gmail.com

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ Մարինե – ԵՊՀ Արտասահմանյան գրականության ամբիո-
նի դասախոս

КИРАКОСЯН Марине - преподаватель Кафедры зарубежной литературы
Ереванского Государственного Университета

KIRAKOSYAN Marine - YSU, Chair of Foreign Literature, lecturer

Էլ. փոստ - marina@viptravel.am

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Անահիտ – ՀՀ ԳԱԱ Մ. Արեղյանի անվան գրականության
ինստիտուտի հայրորդ

ОГАНЕСЯН Анаит - соискатель Института литературы НАН РА имени
Манука Абегамяна

HOVHANNISYAN Anahit - RA, NAS, Institute of Literature after Manuk Abeghyan, PhD student

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Սուսաննա – ՀՀ ԳԱԱ Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտի առաջատար գիտաշխատող

ОВАНЕСЯН Сусанна - ведущий научный сотрудник Института литературы НАН РА имени Манука Абегиана

HOVHANNISYAN Susanna - RA, NAS, Institute of Literature after Manuk Abeghyan, Leading researcher

Էլ. փոստ - g_barents@mail.ru

ՄԿՐՏՈՒՄՅԱՆ Արտուշ – ՀՀ ԳԱԱ Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտի ասպիրանտ

МКРТУМЯН Артуш - аспирант Института литературы НАН РА имени Манука Абегиана

МКРТУМЯН Artush - RA, NAS, Institute of Literature after Manuk Abeghyan, PhD student

Էլ. փոստ - artush-mkrtumyan@hotmail.com

ՄՆԱՏԱԿԱՆՅԱՆ Եվա – ՀՀ ԳԱԱ Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտի ավագ գիտաշխատող

МНАЦАКАНЯН Ева - старший научный сотрудник Института литературы НАН РА имени Манука Абегиана

MNATSAKANYAN Eva - RA, NAS, Institute of Literature after Manuk Abeghyan, Senior researcher

Էլ. փոստ - mnacakanyaneva@mail.ru

ՄՈՒՇԵԴՅԱՆ Ալբերտ – ՀՀ ԳԱԱ Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտի առաջատար գիտաշխատող

МУШЕГЯН Альберт - ведущий научный сотрудник Института литературы НАН РА имени Манука Абегиана

MUSHEGHYAN Albert - RA, NAS, Institute of Literature after Manuk Abeghyan, Leading researcher

Էլ. փոստ - albert.musheghyan@yandex.com

ՈՍԿԱՆՅԱՆ Ռուզաննա - ԵՊՀ հայցորդ

ВОСКАНЯН Рузанна - соискатель Ереванского Государственного Университета
VOSKANYAN Ruzanna - YSU, PhD student

Էլ. փոստ - rvoskanyan@mail.ru

ՈՐՍԿԱՆՅԱՆ Հերիքնազ – ՀՀ ԳԱԱ Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտի փոխտնօրեն

ВОРСКАНЯН Эрикназ - заместитель директора Института литературы НАН РА имени Манука Абегиана

VORSKANYAN Heriknaz - RA, NAS, Institute of Literature after Manuk Abeghyan, Deputy director

Էլ. փոստ - vorskanyan.heriknaz@mail.ru

ՊԵՏՐՈՍՅԱՆ Ռուզաննա - ԵՊՀ օտար լեզուների ամբիոնի դասախոս
ПЕТРОСЯН Рузанна - преподаватель Кафедры иностранных языков
Ереванского Государственного Университета

PETROSYAN Ruzanna - YSU, Chair of English Language, lecturer

Էլ. փոստ - ruzan.petrosyan@yahoo.com

ՍԱՐԻԲԵԿՅԱՆ Հրաչյա – ՀՀ ԳԱԱ Մ. Արեղյանի անվան գրականության
ինստիտուտի Սփյուռքահայ գրականության բաժնի վարիչ

САРИБЕКЯН Грачья - Заведующий Отделом диаспоры (западно-армянской литературы) Института литературы НАН РА имени Манука Абеяна

SARIBEKYAN Hrachya - RA, NAS, Institute of Literature after Manuk Abeghyan, Head of Literature of Armenian Diaspora Department

Էլ. փոստ - hrachsar@mail.ru

ՍԱՐԻՆՅԱՆ Սերգեյ – ՀՀ ԳԱԱ Մ. Արեղյանի անվան գրականության ինստի-
տուտի գլխավոր գիտաշխատող

САРИНЯН Сергей - главный научный сотрудник Института литературы
НАН РА имени Манука Абеяна

SARINYAN Sergey - RA, NAS, Institute of Literature after Manuk Abeghyan,
Chief researcher

ՍԻՄՅԱՆ Տիգրան – ԵՊՀ արտասահմանյան գրականության ամբիոնի
պրոֆեսոր

СИМЯН Тигран - профессор Кафедры зарубежной литературы Ереванского
Государственного Университета

SIMYAN Tigran - YSU, Chair of Foreign Literature, professor

Էլ. փոստ - tsimyan@ysu.am

ՎԱՀԵ Արսեն – ԵՊՀ Արտասահմանյան գրականության ամբիոնի դոցենտ
ВАГЕ Арсенян - Доцент Кафедры зарубежной литературы Ереванского
Государственного Университета

VAHE Arsenyan - YSU, Chair of Foreign Literature, associate professor

Էլ. փոստ - vahearsen@yahoo.com

ՀՀ ԳԱԱ Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ԳՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՐԵՍ

ԺԷ
2016

Համարի թողարկման պատասխանատու՝ Սուրեն Աբրահամյան

Հրատ. խմբագիր՝ Արմեն Ավանեսյան
Սրբագրիչ՝ Արմենակ Ղազինյան
Շապիկը՝ Վիտալի Ասիրևի

Լրատվական գործունեություն իրականացնող՝ Մ. Աբեղյանի անվան
գրականության իրնատիրուտ ոչ պետական առևտրային
կազմակերպություն 03.03.1997
(գրանցման 286.0120, վկայական Բ 003222)
Հասցե՝ Գր. Լուսավորչի 15
Հեռ. և հեռատիպ՝ 56.32.54, e-mail՝ litinst.@sci.am, 055-62,44,77
Էլ. հասցե՝ litinst.@sci.am

Ստորագրված է տպագրության 01.04.2017:
Տպաքանակ՝ 300: Ծավալը՝ 22.5 տպ.մամուլ:
Գինը՝ պայմանագրային



ИЗДАТЕЛЬСТВО АРМАВ

Ք. Երևան, Շիրազի 24 շ. 48 բն.
հեռ.՝ 34-73-35
Էլ.փոստ՝ armav-hrat@mail.ru

Г. Ереван, ул. Шираза 24 д. 48 кв.
тел.՝ +374-10-34-73-35
Email: armav-hrat@mail.ru